Ուսուցանել Հոգով. մի քանի բաներ, որոնք կարելի է կամ չի կարելի

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Նիլ Ա. Մաքսվելը (1926–2004) Հոգով ուսուցանելու համար առաջարկել է որոշ թույլատրված և չթույլատրված բաներ.

Կարելի է	Չի կարելի
1. Կենտրոնացեք ուսուցման կարևորության վրա՝ սրտում պահպանելով վճռականություն ու հանգստություն :	1. Մի անհանգստացեք Մարթայանման հոգսերով: Հիշեք, թե մի անգամ Էմմայի հետ անախորժություն ունենալուց հետո, ինչպես էր Ջոզեֆ Սմիթը դժվարանում թարգմանել: Հոգուն հրավիրելը դժվար է, բայց նա չի գա, եթե տարված լինենք այլ մտահոգություններով:
2. Հեզ եղեք և «ես կասեմ քեզ քո մտքում» (ՎևՈւ 8.2):	2. Մի ձգտեք տպավորություն թողնել մարդկանց կողմից լսելի կամ նկատելի լինելու համար:
3. Աչքերով ուշադիր հետևեք և լսեք ուսանողներին:	3. Մի ներկայացեք այնքան զբաղված, որ կարծես ժամանակ չունեք լսել Հոգուն կամ ուսանողներին: Եթե Հոգուն չեք լսում, մի ակնկալեք, որ դասարանը Ձեզ կլսի:
4. Գործածեք հիշվող ու հեշտ մտաբերվող ոգեշնչված կարճ արտահայտություններ:	4. Բառերի ու հասկացությունների քանակը մի բազմացրեք: Մի՞թե լեռան քարոզն այդքան ոգեշնչող կլիներ, եթե երեք հատոր լիներ:
5. Իմացեք ներկայացվող դասի նյութը: Խորհեք և աղոթեք, որ դասի նպատակը պարզ լինի:	5. Դասը մի վերածեք ընտրության մեծ հնարավորությամբ շվեդական սեղանի՝ հուսալով, որ ինչ-որ մեկն օգտակար բան կգտնի: Նպատակի բացակայությունը ուսանողներին անորոշության մեջ է թողնում:
6. Ներկայացրեք դասի պատշաճ պահանջն ու եզրակացությունը:	6. Մի պատասխանեք ոչ մեկի կողմից չտրված հարցերին:
7. Տվեք ոգեշնչող հարցեր:	7. Մի խուսափեք հարցերից:
8. Պատրաստ եղեք Հոգու ազդեցության ներքո սովորել ձեր ասածից: Նախագահ Մարիոն Գ Ռոմնիից մի քանի առիթներով լսել եմ. «Ես միշտ զգում եմ, թե երբ եմ Սուրբ Հոգու ազդեցության տակ խոսում, որովհետև միշտ իմ ասածից ինչ-որ բան սովորում եմ» (in Boyd K. Packer, *Teach Ye Diligently* [1975], 304):	8. Մի վախեցեք մի պահ մտածել ուսանողների առաջ:
9. Կանխամտածված դադարի պահեր տրամադրեք: Հոգին իր կողմից կապահովի «չերևացող բաների ապացույցը» (Եբրայեցիս 11.1):	9. Մի վախեցեք ոգեշնչող լռությունից:
10. Թույլ տվեք, որ վարդապետությունն ինքը խոսի իր մասին: «Աստծո կողմից հայտնված յուրաքանչյուր սկզբունք իր մեջ կրում է ճշմարտության իր համոզմունքը մարդկային մտքի համար» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 72):	10. Վերջին հաշվով, մի «վաճառեք» վարդապետությունները:
11. Կիսվեք ձեր վկայությամբ պատշաճ և առանձնահատուկ ձևով:	11. Պարզապես մի ասեք. «Ես վկայություն ունեմ այդ մասին»:

Վերամշակվել է Նիլ Ա. Մաքսվելի խոսքերից. "*Teaching by the Spirit—'The Language of Inspiration'* " (CES Symposium on the Old Testament, Aug. 15, 1991), 4–5, si.lds.org:

© 2016 BY Intellectual Reserve, Inc. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: